ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՀ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԴՈԿՏ. ՄԻՀՐԱՆ ԱՂԲԱԲՅԱՆԻ ՀԵՏ

***-- Ճարտարագիտության, գործարար կառավարման, քաղաքագիտության և հասարակական առողջապահության մագիստրոսի կոչում շնորհող ծրագրերի իրագործումից հետո որոշվեց բացել մագիստրոսի որակավորմամբ "Միջազգային և համեմատական իրավունքի" ծրագիրը: Ինչու՞ ընտրվեց հատկապես այդ ճյուղը:***

--- Մենք որոշեցինք իրագործել իրավագիտության ծրագիրն այն բանից հետո, երբ Հայաստանի շատ քաղաքական ղեկավարներ, մասնավորապես նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը և շատ ուրիշներ շեշտադրեցին միջազգային և տնտեսական իրավագիտության դասընթացների կազմակերպման անհրաժեշտությունը:

Շուկայական տնտեսության և ժողովրդավարության համար հիմնավոր դաշտ ստեղծելու նպատակով Հայաստանի օրենսդրությունն այսօր ենթակա է հսկայական վերափոխումների: Հայաստանն ընդունել է սահմանադրություն և արդեն գործում է Սահմանադրական դատարանը: Այն այժմ որպես պետություն պետք է դիտարկի միջազգային շատ պայմանագրերի իր միանալու հարցը, բանակցություններ վարի նոր երկկողմ համաձայնագրերի շուրջ: ՀՀ Ազգային Ժողովը գալիք երկու, երեք տարիների ընթացքում լայն ծրագրեր ունի ընդունելու նոր օրենսգրքեր ու օրենքներ:

Այս ամենը պահանջում է հսկայական գիտելիքներ և հմտություններ իրավական ասպարեզում, որ համեմատաբար քիչ է ուսումնասիրված նախկին ԽՍՀՄ հանրապետություններում, այդ թվում և Հայաստանում: Նշված բնագավառում արտասահմանյան հանրության կողմից տրամադրվել է կարևոր տեխնիկական և մասնագիտական բազմակողմանի աջակցություն: Սակայն, երբ դրվում է նման ընդգրկուն և հիմնավոր խնդիր, որոշ ժամանակ է պահանջվում զարգացնելու համար ազգային մասնագիտական ներուժ, որ պիտի լուծի այն: Հայաստանի համար լավագույն իրավագետները նրանք են, ովքեր լավ են պատկերացնում տեղի իրավիճակը, հասարակությունը, ովքեր գիտեն երկրի օրենքների ենթատեքստը և միաժամանակ լավատեղյակ են միջազգային և համեմատական իրավական դրույթներին: Մենք հավատացած ենք, որ Հայաստանի համար լավագույն իրավագետները կարող են դառնալ տեղացի ուժերը, որոնք պիտի զբաղվեն գալիք տարիների ընթացքում ծագող նոր կարգի իրավական խնդիրներով:

***-- Ծրագիրը ենթադրում է մասնագիտական երկու ուղղություն՝ միջազգային և համեմատական: Կխնդրեինք ներկայացնել դրանց ընդգրկման շրջանակները:***

---Բացվելիք ծրագրում կարող են ընդգրկվել նրանք, ովքեր արդեն ունեն իրավաբանի մասնագիտություն: Բոլոր ուսանողները պարտադիր պիտի մասնակցեն հիմնական դասընթացներին, որոնցից են "Պայմանագրեր", "Իրավաբանական անձիք", "Համեմատական սահմանադրական օրենք", "Իրավական գրագրություն", "Մասնագիտական էթիկա", "տնտեսական իրավունք" և այլն: Այս դասընթացները ուսանողներին պիտի ծանոթացնեն այն որոշ հիմնական իրավական հասկացություններին, որոնք հիմք կծառայեն ծրագրի հետագա մասնագիտական կողմնորոշման համար:

Միջազգային տնտեսական իրավունք ծրագիրը ուսանողներին կծանոթացնի շուկայական տնտեսությունում գործող հաստատությունների, միջազգային գործարարության վրա ունեցած նրանց ազդեցության, ինչպես նաև միջազգային համակարգում գործող տարբեր համաձայնագրերի հետ: Ուսուցանվող առարկաներից են "միջազգային առևտրային իրավունք", "Միջազգային վեճերի լուծում, "Միջազգային ֆինանսական իրավունք, "Գույքի ֆինանսական իրավունք", "Միջազգային կազմակերպություններ", "Միջազգային համաձայնագրեր և պայմանագրեր":

Համեմատական սահմանադրական իրավունքի ծրագիրը կզարգացնի ուսանողների իրավական վերլուծական հմտությունները, կծանոթացնի սահմանադրական համակարգի բարդություններին և մարդու իրավունքների հիմնահարցերին: Դասավանդվելիք առարկաներից կլինեն "Օրենսդրական գործընթաց և նախագծում", "Իշխանությունների տարանջատում", "Միջազգային հանրային իրավունք", "Մարդու իրավունքների միջազգային օրենք", "Համեմատական սոցիալական պաշտպանություն":

Ես ներկայացրեցի միայն ծրագրի ընդհանուր նկարագրությունը: Մենք առանձնակի ուշադրություն կդարձնենք Եվրոպական միության օրենքի ընդգրկմանը և դասավանդումը կվարենք քաղաքացիական իրավունքի տեսանկյունից, քանզի Հայաստանն այսօր հետևում է հենց այդ համակարգին: Ընդհանուր իրավունքը, որ հիմքն է ամերիկյան և բրիտանական իրավական համակարգերի, կօգտագործվի համեմատման սկզբունքով:

***-- Ինչպիսի՞ն կլինի ծրագրի դասախոսական կազմը և ինչպես պիտի կազմակերպվի դասավանդումը:***

---Դասախոսների հիմնական մասը կկազմեն իրավունքի ամերիկյան դասախոսները՝ միջազգային և համեմատական իրավունք մասնագիտացումներով: Ուսումնական և դասախոսների ներգրավման հարցերում սերտորեն համագործակցում ենք Կալիֆորնիայի համալսարանի Բերկլիի իրավագիտական բաժնի հետ, որն ԱՄՆ-ում գործող լավագույն ուսումնական հաստատություններից է : Այսպիսով, դասախոսական կազմի մի մասը կլինի Կալիֆորնիայի համալսարանից, որն ունի իրավունքի երեք հավելյալ բաժիններ: Կլինեն նաև դասախոսներ այլ համալսարաններից, և իհարկե միշտ ողջունելի կլինի այն հայաստանցի դասախոսների մասնակցությունը, ովքեր ունեն միջազգային իրավունքի դասավանդման փորձ: Նամանավանդ, որ որոշ թեմաների ներկայացման ընթացքում կքննարկվեն նաև հայաստանյան համապատասխան օրենքները:

Դասավանդումը հիմնված կլինի ուսանողի աշխույժ մասնակցության, ինչպես նաև գործնական պարապմունքների վրա, որոնք նախատեսված են զարգացնելու ունկնդիրների պրակտիկ իրավական հմտությունները: Չնայած օգտագործում եմ ուսանողներ տերմինը, ենթադրվում է, որ մասնակիցները պիտի լինեն պրոֆեսիոնալ իրավաբաններ, իսկ ծրագիրը կունենա ավելի գործնական կողմորոշում:

Ուսուցումը կտարվի անգլերեն լեզվով: Կուզենայի ընդգծել, որ այս ծրագիրը մասնակիցներին լայն հնարավորություն կտա ընդարձակելու ոչ միայն իրավական, այլ նաև մասնագիտական անգլերենի իրենց իմացությունները: Թեև ենթադրվում է, որ դիմորդները պետք է ունենան անգլերեն լեզվի մասնակի իմացություն, սակայն մենք սեպտեմբերին ուսանողներին առաջարկելու ենք անգլերեն լեզվի արագացված ուսուցման ծրագիր՝ նրանց լեզվական իմացությունները բարելավելու համար: Իրավունքի հիմնական ծրագիրը կսկսվի ավելի ուշ՝ գարնանը, երբ ուսանողների անգլերեն լեզվի գիտելիքներն արդեն կատարելագործված կլինեն: Ի դեպ, հետաքրքրվածների համար շատ ժամանակ չի մնացել. փաստաթղթերի հանձնման վերջնաժամկետը այս տարվա հուլիսի 22-ն է:

***--Ասացիք, որ ուսանողները պետք է լինեն պրոֆեսիոնալ իրավաբաններ: Մանրամասնեք, խնդրեմ, ինչպիսի՞ կրթություն և գիտելիքներ պետք է ունենան այս ծրագրի դիմորդները:***

--- Ինչպես վերը նշեցի, ենթադրվում է, որ դիմորդները պետք է ունենան իրավաբանի մասնագիտություն: Մենք ողջունում ենք և վերջին տարիների իրավաբան շրջանավարտներին, և նրանց, ովքեր արդեն ձեռք են բերել որոշ մասնագիտական փորձ: Կարծում ենք, վերջիններս մեծապես պիտի շահեն այս ծրագրից:

Ի դեպ, պարապմունքները կընթանան օրվա ուշ ժամերին՝ հարմարվելու համար նրանց, ովքեր նպատակ ունեն ուսմանը զուգընթաց շարունակել իրենց աշխատանքը:

***--Արդյո՞ք հաշվարկված է նման մասնագետների պահանջարկը Հայաստանի համար:***

---Մեր դիտարկումներով, նման մասնագետների պահանջարկը բավականին մեծ է: Ինչպես արդեն նշեցի, երկրում ընթացող իրավական փոփոխություններին զուգընթաց, Հայաստանը կարիք կունենա շատ իրավաբանների, որոնք ոչ միայն լավատեղյակ են նոր օրենքների բովանդակությանը, այլև հասկանում են դրանց կենսագործման տրամաբանությունն ու ենթատեքստը: Հանրային սեկտորում օրենսդրական նախագծումը, նոր օրենքների հաստատումը և լրացումները շարունակական գործընթացներ են ցանկացած կառավարության համար: Մասնավոր սեկտորում տնտեսական իրավաբաններն ու դատավորները, որ առևտրային բանավեճերի կարգավորողներն են, անհրաժեշտ են մեծածավալ բիզնեսի վարման համար, լինի դա Հայաստանում, թե միջազգային ասպարեզում: Արտասահմանում տարվող քաղաքականության մեջ միջազգային իրավական հարաբերությունների կառավարման գործում միջազգային իրավաբանները մեծ դեր ունեն:

Ելնելով այս հիմավորումներից, կարծում ենք, որ նման ծրագիրը կդառնա այս հանրապետության համապատասխան մասնագետներ պատրաստման առաջատար օղակներից մեկը: Կցանկանայի երախտիքս հայտնել այս երկրի ղեկավարներին, որ հեռատեսորեն ընկատեցին այս խնդրի անհրաժեշտությունը: Նաև շնորհակալությունս պիտի հայտնեմ ԱՄՆ կառավարությանը, և հատկապես ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Պիտեր Թոմսենին ցուցաբերած ջերմ աջակցության և ֆինանսական օժանդակության համար: Կարծում եմ, գործարարության և հատկապես միջազգային իրավունքի մասնագետները այս երկրի համար կդառնան ավելի ու ավելի անհրաժեշտ: